Ավետիք Իսահակյան

Եվ ճամփեքի մեջ, ամայի դաշտում

Եվ ճամփեքի մեջ, ամայի դաշտում
Մենակ, անընկեր, ընկած եմ մոլոր.
Չորս կողմից հողմը վերաս է շաչում,
Եվ հոգիս խոժոռ, և միտքս խոժոռ:

Սիրտս գթով լի՝ մարդկանց մեջ մտա,
Բայց ողջույնի տեղ կռվի կոչ տվին.
Կյանքի գոռ կռիվ՝ կատաղի, դժնյա,
Ուր որ ամենքը ամենքի ընդդեմ
Դաշույն են սրում՝ սիրո փոխարեն:

Եվ կյանքի կռվից վիրավոր, հաղթված
Ընկած եմ հիմա այս ափում վայրի.
Շուտով կտեսնեմ աչքերս սառած,
Բայց նրանց խիղճը երբեք չի խայթվի …

1902